

Բնական պաշարների կառավարում և էկոհամակարգային ծառայությունների պահպանությունն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար (ECOserve)

Բազմազանություն՝ հանուն ավելի լավ ապագայի

Պատվիրատու՝
Գործընկերներ՝
Ընթացիկ ժամկետ՝
Բյուջե՝
Երկրներ՝
Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (S327L/BMZ)
Հայաստանում՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Ադրբեջանում՝
Գյուղատնտեսության նախարարություն և Վրաստանում՝ Բնապահպանության և Գյուղատնտեսության
նախարարություն
2018 թ. դեկտեմբերից 2021 թ. նոյեմբեր
13,1 մլն. Եվրո
Հայաստան, Ադրբեջան, Վրաստան



Մեկ օրինակ մեր աշխատանքից

Յողերի Էրոզիան լուրջ խնդիր է հանդիսանում Հարավային Կովկասի լեռնային շրջաններում։ Գյուղատնտեսական նշանակության հողերի, արոտավայրերի և անտառների դեգրադացիան գնալով մեծանում է, իսկ դրանց արտադրողականությունը՝ նվազում։ Հաշվի առնելով այդ իրավիճակը՝ երեք երկրների փորձագետներն ու հողօգտագործողները հանդիպեցին 2018 թ. վերջին կազմակերպված համաժողովի ընթացքում՝ այդ խնդրի լուծման եղանակները քննարկելու նպատակով։ Մասնակիցները ներկայացրեցին Էրոզիայի կանխարգելման կամ առնվազն վերահսկման եղանակների վերաբերյալ իրենց փորձը, ինչպես օրինակ՝ արոտավայրերի բարելավված կառավարումը։ Հանդիպման ընթացքում պատվիրակները Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Հիմալայների առաջատար փորձագետների հետ երկխոսության հնարավորություն ունեցան։ Համաժողովին մասնակցելու հրավերը ուղարկվել էր ECOserve ծրագրի կողմից՝ ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի քարտուղարության և Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հետ համատեղ։ Վերադառնալով հայրենիք՝ միջոցառման մասնակիցներն իրենց փորձն են կիրառում, որպեսզի օգնեն երաշխավորել, որ բնությունը հետագայում էլ կնպաստի գյուղական համայնքներում ապրող ապագա սերունդների կյանքի կայունացմանը։

Մարտահրավերներ

Հարավային Կովկասի երեք երկրներում հողօգտագործման գերիշխող համակարգերը (արոտավայրերը՝ Հայաստանում, գյուղատնտեսությունը՝ Ադրբեջանում և անտառները՝ Վրաստանում) անընդհատ ենթարկվում են դեգրադացիայի։ Ավելին, Հայաստանի և Վրաստանի գյուղական շրջաններում Էներգիայի մատակարարումը հիմնված է բնական պաշարների ոչ կայուն օգտագործման վրա։ Բոլոր մակարդակներում հավաստի տվյալների, կանոնակարգերի և փորձառության պակաս կա։ Բացակայում են նաև բնական պաշարների՝ կայուն և կենսաբազմազանության տեսանկյունից բարենպաստ օգտագործման մոտեցումները։

Նպատակներ

Մեր գործընկերների հետ համատեղ բարելավում ենք Հարավային Կովկասում հողօգտագործման գերիշխող համակարգերում (արոտավայրեր, գյուղատնտեսություն, անտառներ) բնական պաշարների՝ կայուն և կենսաբազմազանության տեսանկյունից բարենպաստ



Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Հրատարակված է՝

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀ/GIZ) կողմից

Գրանցված գրասենյակներ՝
Բոն և Էշբորն, Գերմանիա

ԳՄՀ Հարավային Կովկասի գրասենյակ Ռուսթավելի պող.
42/ Գրիբոյեդով 31ա,
0108 Թբիլիսի, Վրաստան
Հեռ.՝ +995 32 2201800
Էլ. փոստ՝ giz-georgia@giz.de
Կայք՝ www.giz.de

ԳՄՀ հայաստանյան գրասենյակ
Բաղրամյան պող. 4/1,
0019 Երևան, ՀՀ
Հեռ.՝ +374 (0) 10 589337
Էլ. փոստ՝ giz-armenia@giz.de
Կայք՝ www.giz.de

Պատասխանատու՝ Կառլ Թաեթենսեն,
Աննե Դորիթ Զեմփա
Խմբագրում՝ Իրինա Բալասյան
Ձևավորում և Էջադրում՝ Բաթաշ ստուդիո
Օգոստոս 2019 թ.

Երեք երկրների պիլոտային համայնքներում 12000 հա կազմող անտառներում, գյուղատնտեսական նշանակության հողերում և արոտավայրերում կլիմային հարմարեցված և կենսաբազմազանության տեսանկյունից բարենպաստ կառավարման մեթոդներ են ներմուծվել:

Շուկայական ապրանքների տարածման համար կմշակվեն պարտադիր իրականացման ենթակա ծրագրեր՝ ջեռուցման աղբյուր հանդիսացող վառելիքայտի և գոմաղբի արդյունավետ օգտագործման կամ փոխարինման նպատակով:

Արդյունքներ

Երեք երկրներում բարեփոխումների հիմնական գործընթացները (տարածքային բարեփոխումները Հայաստանում, գյուղատնտեսական ոլորտի բարեփոխումներն Ադրբեջանում և անտառ-տնտեսության ոլորտի բարեփոխումները Վրաստանում) ակտիվորեն նպաստում են բնական պաշարների պահպանությանն ու կայուն օգտագործմանը:

Երեք երկրների կառավարությունները բնական պաշարների օգտագործման վերաբերյալ քաղաքականություններ կմշակեն՝ հիմնվելով հավաստի տվյալների վրա:

Երեք երկրների երիտասարդներն ավելի հակված կլինեն բնական պաշարների պահպանությանն ու դրանց կայուն օգտագործմանը:

Համալսարաններն ու մասնագիտական կրթական հաստատությունները բնական պաշարների կայուն կառավարմանը վերաբերող կրթական և վերապատրաստման ծրագրեր կառաջարկեն:

Բնական պաշարների կառավարում և Էկոհամակարգային ծառայությունների պահպանությունն Հարավային Կովկասում գյուղական տարածքների կայուն զարգացման համար (ECOServe) Բազմազանություն՝ հանուն ավելի լավ ապագայի

Մեր ներդրումը Հայաստանում

Պատվիրատու՝
Գործընկերներ՝

Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (SZ27L/BMZ) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (համակարգող մարմին), Էկոնոմիկայի նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Ճարտարապետության և կառուցողականության նախարարություն, Ինչպես նաև ընտրված պիլոտային շրջանների համայնքապետարաններ (իրականացնող գործընկերներ)

Երկրին բնորոշ օրինակ

Հայաստանի հողատարածքի մոտ 40 տոկոսը կազմում են բնական մարգագետիններն ու արոտավայրերը: Այս տարածքներում գերազանցված են հետևանքով հնարավոր է հողի էրոզիայի խորացում և դեգրադացում: Տվյալ ոլորտի վրա ազդում են արոտավայրերի օգտագործման սխալ կազմակերպման հետևանքները, քիչ է օգտագործվում նաև համակարգված փոխգործության ցանկացած ներուժ՝ երկրի բնապահպանական նպատակների համատեքստում: Հայաստանը մեկնարկել է գյուղատնտեսական աշխարհագրական տեղեկատվական համակարգի մշակումը՝ որպես մշտադիտարկման գործիք, որը նաև կծառայի առկա միտումների վերլուծության բարելավմանը: Այդ նպատակով ECOServe-ը աջակցում է խոտհարքների և արոտավայրերի քարտեզագրմանն ու այս տեղեկատվության կապակցմանը առկա տվյալների բազային (օր.՝ վտանգված կենդանական և բուսական տեսակների տվյալներ): Դա հանգեցնում է տեղական և ազգային մակարդակում հողերի օգտագործման և կառավարման ծրագրերի մշակման և իրականացման բարելավմանը: Նման օժանդակությունը գործընկերներին հնարավորություն է ընձեռում համակարգից առանձնացնել շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվությունը, մեկնաբանել այն և կիրառել քաղաքական ռազմավարական գործընթացներում: Ավելին՝ օգտագործողները վերապատրաստվում են այդ տվյալների մշտական թարմացման թեմայով:

Մեր գործունեության 4 ոլորտները.

Տվյալների հավաքագրում և կառավարում

- » Անտառտնտեսության, արոտավայրերի, հողագործության և կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների հավաքագրման մեթոդների մշակում:
- » Արոտավայրերի և կենսաբազմազանության վերաբերյալ տվյալների հավաքագրում:
- » Այս տվյալների համակարգերից օգտվելու վերաբերյալ վերապատրաստումների անցկացում:
- » Պաշարների, այդ թվում վառելիքայտի կարիքների վերաբերյալ սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների նախաձեռնում:

Կարգավորող դաշտ

- » Բնական պաշարների կայուն և կենսաբազմազանության տեսանկյունից բարենպաստ օգտագործման համար իրավական դաշտի բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրում:
- » Կենսաբազմազանության ու Էներգաարդյունավետության վերաբերյալ առկա կանոնակարգերում բացթողումների բացահայտում և գնահատում:
- » Խորհրդատվության տրամադրում արոտավայրերի կառավարման և խոշորացված համայնքների պլանավորման գործընթացում Էկոհամակարգային ծառայությունների ինտեգրման վերաբերյալ:

Պիլոտային գործողություններ

- » Կայուն գյուղատնտեսության, անտառների (վերա)տնկման և գյուղական համայնքներում Էներգաարդյունավետության պիլոտային ծրագրերից քաղված դասերի վերլուծություն:
- » Պաշարների՝ կլիմայի տեսանկյունից բարենպաստ կառավարման մասշտաբային մոտեցումների բացահայտում և ծախսերի և եկամուտների վերլուծություն:
- » Շուկայի ներուժի բացահայտում և աջակցություն Էներգաարդյունավետությանը, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործմանն ուղղված բիզնես մոդելների զարգացմանը:

Վերապատրաստումներ և հանրային կապեր

- » Վերապատրաստման և հանրային կապերի ոլորտում գործող որակավորված կազմակերպությունների բացահայտում:
- » Բնական պաշարների կայուն օգտագործման և Էներգաարդյունավետության բնագավառներում կրթության և վերապատրաստման կարիքների վերլուծություն, ինչպես նաև նոր դասընթացների և ուսումնական ծրագրերի բովանդակության մշակում:
- » Կայուն գյուղատնտեսության, անտառտնտեսության և Էներգաարդյունավետության վերաբերյալ ռազմավարության մշակում և իրագրման բարձրացմանն ուղղված քարոզարշավների կազմակերպում՝ հատկապես երիտասարդների համար:



Implemented by:

